



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

26 օգոստոսի 2013թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի

Կ. Բալայանի

Քննության առնելով «Նելսինյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության անհատական դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Նելսինյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը 2013թ. օգոստոսի 5-ին դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՏ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը ճանաչել ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածին հակասող եւ անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթը չի սահմանում համայնքին պատկանող գույքն օտարելու, անհատույց (մշտական) օգտագործման փրամադրելու վերաբերյալ հստակ չափորոշիչներ եւ կարգավորումներ, եւ չի սահմանափակում համայնքին պատկանող գույքն անհատույց օտարելու հնարավորությունը, հետևաբար՝ չի երաշխավորում իրավական որոշակիություն եւ կանխատեսելիություն:

2. Դիմումը ձեռակերպված չէ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 27-րդ հոդվածի պահանջներին համահունչ: Այս համապեքսություն ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ սահմանադրական դատարանում անհարկական դիմումների ընդունելիության վավերապայմաններն ինքնանպասարկ չեն, այլ ուղղված են ապահովելու սահմանադրական դատարանի՝ սահմանադրական արդարադատություն իրականացնելու պարզաճ եւ արդյունավետ գործառույթի իրականացմանը, ձերբազատելով սահմանադրական դատարանին թե անհիմն դիմումներից եւ թե դրանց հետեւանքով սահմանադրական դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, փաստելով, որ նման դիմումներն իրենց պահանջով չեն ծառայում կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին:

Դիմումի ուսումնասիրության արդյունքներով կարելի է փաստել, որ դիմողը չի ներկայացրել պարզաճ իրավական հիմնավորումներ իր կողմից վիճարկվող իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ, մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհարկական դիմումի ընդունելիության պարտադիր պահանջ, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համապեքսություն ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. նոյեմբերի 24-ի ՍԴԱ-839 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հարկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որեւէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը չի հիմնավորել, թե վիճարկվող դրույթի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջեւ պարզաճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՆՏ սահմանադրական դատարանի՝ 2009թ. նոյեմբերի 24-ի ՍԴԱ-839

որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

3. Դիմումի ընդհանուր փրամաբանությունը վկայում է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ:

Նամաձայն ՏՏ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Այսինքն՝ առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՏՏ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Նելսինյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝